

ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԽՈՐՀՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՀՐ – ՔՐԻՍՏՈՍ – ՓՈՔՐ ՄՇԵՐ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԼԻԼԻԹ ՄԵՅՐԱՆՅԱՆ

Ամփոփում: Հոդվածում Միհր-Քրիստոս-Փոքր Մհեր առնչության դիտարկումով փորձ է արվում մեկնաբանել ցորնահատի խորհրդանշական իմաստը: Դիտարկվում են ցորեն-ցուլ-Պերսեփոնե-Կորա զուգահեռները՝ նրանց միջև առկա, հայտնատեսվող կապը բացահայտելու նպատակով: Պատմահամեմատական, միֆաքննադատության և նշանագիտական մեթոդների, ստուգաբանական քննության միջոցով լուծվում են միհրականության կրոնաճիսական համակարգի, ընծայաբերման ծեսի խորհրդաբանական իրողությունների, միհրականություն-քրիստոնեություն նկատված կապի մեկնաբանմանն ու հիմնավորմանն ուղղված խնդիրներ: Միհրի կողմից կատարվող ցլասպանության դրվագում ցուլի «չարչարանքը» զուգահեռվում է Քրիստոսի՝ խաչի վրա չարչարանքին և հատիկի՝ հաց դառնալու «չարչարանքին»՝ հողում հատիկի ճեղքումից մինչև հացի թխվելը՝ կրակի փորձությանը դիմանալը: Հրնթացս քննաբանվում են միհրականության ընծայաբերման աստիճաններից երկուսը՝ ագռավը և ծպտյալ-կին-կույսը, Միհրի ավանդազրույցը և միհրականության ծեսը արտապատկերող հոռմեական հարթաքանդակներում և որմնանկարներում մշտառկա շան կերպարը: Վերջինի մեկնաբանության արդյունքում առաջ է քաշվում Արա Գեղեցիկի առասպելի հարալեզների դրվագի մեկնաբանությանն ուղղված վարկած: Յորեն և ցուլ արմատների ստուգաբանական փորձի հիման վրա կատարվում են Միհր-Քրիստոս-Փոքր Մհեր առնչության վաղնջական հիմքը պարզող, ստուգաբանական նոր դիտանկյուն բացելու հնարավորություն ընձեռող ուշագրավ դիտարկումներ: Փոքր Մհերի կերպարը ներկայացվում է հայրական և աստվածային կարգի և զոհաբերման օրենքի, ամլության և հատիկի խռո-

րացման երազանքի համատեքստում¹: Ուսումնասիրության արդիականությունը հիմնավորվում է ազգային գոյաբանական խնդիրների ըմբռնման և լուծման հնարավորության տեսանկյունից:

Հիմնաբառեր՝ Միիր, Քրիստոս, Փոքր Մհեր, ցորնահատ, ցուլ, չարչարանք, Պերսեփոնե, Կորա, զոհաբերություն, պտղաբերություն, քարանձավ, միհրականություն

Միհրականության դավանաբանությունը և կրոնաձիսական համակարգը

Հայ բանագիտության մեջ քննաբանված և լուծված խնդիրներ են Մեծ Մհերի և Փոքր Մհերի կապը Միհրի հետ, Փոքր Մհերի կապը Արտավազդի, Դիորփոսի և Խալդիի հետ², Միիր-Միտրա-Խալդի-Արա Գեղեցիկ առնչությունը, Արա Գեղեցիկի համապատասխանությունը Խալդիին և հնդկական Միտրա-Վարունային, Մհերի համապատասխանությունը Արա Գեղեցիկին՝ փոյուզական Ատտիսի զուգահեռին, Փոքր Մհերի կերպարի մերձավորագույն այլ զուգահեռների ճշտումը³:

Ի մի բերելով նկատված զուգահեռները՝ Ա. Պետրոսյանը «Մասնա ծոերի» երկու Մհերներին իրավացիորեն համարում է ուրարտական Խալդիի, հայկական դիցաբանի Միհրի և իրանական Միիր-Միթրայի վիպական համապատասխանություններ: Մեծ Մհերի Առյուծաձև կոչումը Խալդիի սիմվոլ առյուծի հետ նրա կապի վկայությունն է: Մեծ Մհերի կողմից Սպիտակ դևի սև ցլի սպանությունը դիտարկվում է իբրև իրանական Միթրայի և արևմտյան միթրայականութ-

¹ Տե՛ս Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երկրորդ հրատարակություն, Եր., «Հայպետհրատ», 1961, էջ 319-320:

² Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Եր., 1997, <https://vk.cc/cpno7f>, հղման ամսաթիվը՝ 30.06.23:

³ Տե՛ս նույն տեղը:

յան աստծու հետ կապված մոտիվ: Խալդիի հետ Փոքր Մհերի նույնականությունը դրսևորվում է նրա՝ Մհերի դոնից՝ «Խալդիի դարպասից» ներս մտնելու և դուրս գալու խոստման իրողությամբ: Մհեր-Արա Գեղեցիկ զուգահեռը հաստատվում է այդ հերոսների կրկնակի ներկայացվածությամբ. Արա Գեղեցիկը և նրա որդի Արան հիշեցնում են Էպոսի երկու Մհերներին: Ուսումնասիրողը մատնանշում է Մուշեղ Մամիկոնյան-Փոքր Մհեր զուգահեռը՝ այն բխեցնելով հարալեզների դրվագով հաստատվող Մուշեղ-Արա Գեղեցիկ և Արա Գեղեցիկ-Փոքր Մհեր համապատասխանություններից¹:

Միիրը (Միթրաս) հնագույն հոգևոր կերպրնկալումներում, մասնավորաբար հին արիական ժողովուրդների հավատալիքներում համարվել է կենսատու լույսի, մաքրության, բարության, ճշմարտության, իսկ ավելի ուշ՝ արեգակի աստվածը²: Միթրասը աշխարհում և հասարակության մեջ հաստատված հարաբերությունների երաշխավորն էր, պայմանագրի աստվածը (հնդիրանական «միթրաս»՝ պայմանագիր), համարվում էր նաև հաղթանակ պարգևող աստված³:

Միիրի պաշտամունքի աշխարհագրությունն ընդգրկում էր Միտաննի պետության տարածքը դեռևս Ք. ա. 2-րդ հազարամյակի կեսին, ապա և հնագույն Հնդկաստանը, հաջորդիվ՝ Աքեմենյան աշխարհակալությունը, նաև Հայկական լեռնաշխարհը, որտեղ տարածված է եղել անհիշելի ժամանակներից⁴: Վկայակոչելով Ջ. Հիննելսին և ուրիշների՝ Ե. Մարգարյանը մատնանշում է այն տեսակետը, որ «...միիրականության ակունքներն առաջին հերթին պետք է փնտրել Հայկական

¹ Տե՛ս նույն տեղը:

² Տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան 4 հատորով, հ. 3, Եր., «Կոտայք-Նոր դար», 1999, էջ 701:

³ Տե՛ս Большая советская энциклопедия, т. 16, М., «Советская энциклопедия», 1974, էջ 337:

⁴ Տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան 4 հատորով, հ. 3, էջ 701:

լեռնաշխարհում»¹: Ավանդությունը վկայում է, որ հենց Հայաստանն է համարվել Միթրա-Միհր-Մհեր աստծո հայտնության, էպիֆանիայի վայրը: Հայաստանում Միհրի պաշտամունքի սրբավայրեր էին միհրական Գառնիի տաճարից ոչ հեռու գտնվող Այրիվանք-Գեղարդավանք քարանձավային համալիրը, նաև Խոր Վիրապը, որը կառուցվել է միհրական հին մեհյանի տեղում:

Ք. ա. վերջին դարերում առաջանում է հատուկ կրոն՝ Միթրասի պաշտամունքով՝ միթրայականություն: Այն տարածվում է հելլենական աշխարհում. առաջին դարում՝ Հռոմում, երկրորդ դարում՝ ամբողջ Հռոմեական կայսրությունում²: Վկայակոչելով մի շարք ուսումնասիրողների՝ Մարգարյանը Միհրին բնութագրում է իբրև փայտքոպոմպոս (հուն.)՝ բարեպաշտ հոգիների անդրաշխարհ ուղեկցող, միջնորդ աստված երկնային և երկրային ոլորտների, վերին և ստորին աշխարհների միջև: Միհրը հայոց մեջ առկա պատկերացումների համաձայն ևս ուներ միջնորդական գործառույթներ³:

Միհրականության ծիսական արարողությունը այդ կրոնի դավանախոսության արտացոլումն էր, իսկ հիմքում Միհրի ավանդագրույցն էր, որը միհրականության առաջին հետազոտողներից մեկը՝ Ֆրանց Կյումոնը, արտածելով հարթաքանդակային դրվագներից և որմնանկարներից, համառոտ ձևակերպում է, ինչպես ինքն է նշում, «մոտավորապես» այսպես: Երկնային շողը ճեղքում է ժայռը, և ժայռից ծնվում է Միհրը գետի ափին, սրբազան ծառի ստվերում՝ մի ձեռքում դաշույն, մյուսում ջահ, և հովիվները ականատես են լինում այդ հրաշքին: Նրանք երկրպագում են մանուկ աստվածուհի-

¹ **Մարգարյան Ե.**, Միհրականության կերպավորությունները հելլենիստական դարաշրջանում (Կոմմագենե, Մեծ Հայք, Հռոմ), «Վեմ» համահայկական հանդես, 2012, Դ (Ժ) տարի, թիվ 3 (39), էջ 31-64, էջ 38:

² Տե՛ս Большая советская энциклопедия, т. 16, էջ 337:

³ Տե՛ս **Մարգարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 38:

յանը՝ նրան նվիրաբերելով իրենց հոտի առաջնածիններին և բերքի առաջին պտուղները: Մանուկ Միհրը պատսպարվում է թզենու սաղարթի մեջ, իր մերկությունը ծածկում թգատերևով և սնվում պտուղներով: Թեպետ հովիվները արածենում էին իրենց հոտերը, մարդիկ դեռ չէին հայտնվել աշխարհում: Միհրը պիտի մրցեր այն էակների և ուժերի հետ, որ բնակվում էին աշխարհում իրենից առաջ: Առաջինը Արևն էր, որի հետ մենամարտում է Միհրը և հաղթում: Միհրը սրբազան դաշինք է կնքում Արևի հետ, և այդ օրվանից դաշնակից հերոսները օգնում էին իրար բոլոր ձեռնարկումներում: Միհրի մյուս հակառակորդը Յուպիտեր-Արամազդի ստեղծած առաջին էակն էր՝ ցուլը: Կյումոնը այդ մենամարտը մեկնաբանում է իբրև վայրի ցլի սանձահարում: Միհրը մենամարտի է բռնվում լեռնային մարգագետիններում արածող ցլի հետ, ենթարկեցնում նրան և հետևի ոտքերից բռնելով՝ տանում քարանձավ՝ իր բնակարանը: Ցլին հաջողվում է փախչել քարանձավից: Այդ ժամանակ Արևը ուղարկում է իր սուրհանդակին՝ Ագռավին՝ Միհրին հաղորդելու ցլին սպանելու հրամանը: Միհրը, ենթարկվելով երկնային կամքին, չկամուրջամբ, սակայն կատարում է այդ դաժան հանձնարարությունը: Իր շան հետ հետապնդելով ցլին՝ նրան է հասնում այն պահին, երբ վերջինս փորձում էր պատսպարվել քարանձավում, և սպանում է իր դաշույնով: Ձոհի մարմնից ծնվում են բոլոր օգտակար բույսերը՝ երկիրը ծածկելով փարթամ կանաչով: Ցլի ողնուղեղից աճում է հացահատիկը (հարթաքանդակներին և որմնանկարներին ցլի պոչի ծայրին հացահատիկի հասկ է (նկ. 1¹)), արյունից՝ որթատունկը (դրանից պիտի քամվեր միստերիաների ժամանակ օգտագործվող սրբազան խմիչքը): Չար ոգին չարչարանքի մեջ մեռնող կենդանու դեմ է ուղարկում իր ուժերին՝ նրանից բխող կենսատու աղբյուրը թունավորելու: Կարիճը, մրջյունը և օձը փորձում են

¹ Ցլասպանության տեսարան. Միթթան սպանում է ցլին, 3-րդ դարի հռոմեական հարթաքանդակ:

վնասել Յցլի վերարտադրողական օրգանները, խմել արյունը, բայց նրանց չի հաջողվում խաթարել հրաշագոր արարչագործությունը: Յլի սերմից առաջանում են բոլոր օգտակար կենդանիները, իսկ նրա հոգին Միհրի հավատարիմ շան ուղեկցությամբ բարձրանում է երկինք և հանձնի Միլվանի՝ դառնում հոտերի պահապանը: Այդպես ենթարկվելով երկնային կամքին՝ ցլասպան հերոսը արարում է բոլոր օգտակար էակներին, իսկ ցլի մահվան շնորհիվ ծնվում է նոր, առավել փարթամ, բարեբեր կյանք: Հաջորդիվ արարվում է մարդկային առաջին զույգը, և չնայած Խավարի ոգու ջանքերին՝ Միհրին հաջողվում է պաշտպանել նրանց: Առաջին աղետը երաշտն էր, և Միհրը, նետով ձեղքելով ժայռը, աղբյուր է բխեցնում և հագեցնում մարդկանց ծարավը: Դրան հաջորդում է ջրհեղեղը (Նոյյան տապանի պատմությանը նմանաբերվող դրվագ է սա՝ համապատասխան հանգուցալուծմամբ): Ապա վրա է հասնում աղետալի հրդեհը, որից նույնպես մարդիկ փրկվում են երկնային հոգաձությանբ: Այսպես ավարտվում է պատմության հերոսական ժամանակը, որով և՛ Միհրի երկրային առաքելությունը: Միհրը Հելիոսի և իր մյուս օգնականների հետ փառահեղ խնջույք է կազմակերպում՝ ի պսակումն և ի նշան հաղթանակի՝ միս, հաց և գինի ճաշակելով: Դրա հիշատակին են ձոնվել միթրայական միստիկական խնջույքները: Այնուհետև աստվածները բարձրանում են երկինք: Միհրը քառաձի մարտակառքով հաղթահարում է օվկիանոսը՝ գնալով մյուս անմահների մոտ: Բայց երկնքից էլ պիտի պահպաներ նրանց, ովքեր երկրպագում էին իրեն ու բարեպաշտորեն ծառայում:

Կյումունի մեկնաբանությամբ Միհրը ընկալվել է իբրև միջնորդ, որին Յուպիտեր-Արամագորը վստահել էր բնության կարգակառույցն ու աշխարհակարգը: Նա լոգոսն էր, աստծո էմանացիան, նրա ամենագործության համամասնակիցը, որը, իբրև դեմիուրգ արարելով աշխարհը, շարունակում էր պահպանել այն: Ըստ միհրականության հետևորդների՝ չնայած

Ահրիմանի նախնական պարտությանը՝ չարի և բարու պայքարը շարունակվում է թե՛ երկնային ոլորտներում և թե՛ երկրի վրա՝ արտացոլվելով նաև մարդկային սրտում, որը միկրո-տիեզերքն է¹:

Միթրայականության կամ միհրականության սրբարաններում՝ միթրեումներում (հայոց մեջ միհրական տաճարները կոչվում էին մեհրյաններ կամ մեհյաններ), կատարվում էին այս ավանդազրույցի խորհրդաբանությունն արտացոլող հատուկ միստերիաներ, որոնց կարող էին մասնակցել միայն ընծայված տղամարդիկ: Միստերիաները բաղկացած էին զոհաբերություններից, պաշտամունքային հացկերույթներից և այլն²: Առաջին միստերիաները ծագում են հինարևելյան ծեսերից՝ Օսիրիսի և Իսիսի պաշտամունքը Եգիպտոսում, Թամուզի³նը՝ Բաբելոնում: Հին Հունաստանում միստերիաները հիշատակվում են մ.թ.ա. 7-րդ դարից: Հարկ է նշել, որ ամենավաղ միստերիաներից հատկապես հայտնի են Էլևսինյան միստերիաները, որոնք կատարվում էին պտղաբերության աստվածուհի Դեմետրայի և նրա դուստր Պերսեփոնեի պատվին: Հայտնի են նաև բնության փոյուզիական աստված Ատտիսի (զուգահեռվում է Ադոնիսի և Արա Գեղեցիկի հետ, իսկ նրան նվիրված ծիսական արարողությունը հիշեցնում է Միհր-Միթրայի միստերիան և քրիստոնեական պատարագը) և մեռած բնությանը վերածնունդ ու պտղաբերություն պարգևող Կիբելեի՝ փոյուզիական աստվածների մոր՝ օրգիաների բնույթ կրող միստերիաները:

Միհրականության հետազոտողները, սովորաբար վկայակոչելով Հերոնիմոսին, ընդունում են ընծայաբերման³ յոթ աստիճաններ՝ Ագռավ, Ծպտյալ (անվանում էին նաև Կին

¹ Տե՛ս **Кюмон Ф.**, Мистерии Митры, <https://vk.cc/cpnobi>, հղման ամսաթիվը՝ 30.06.23թ.

² Տե՛ս Большая советская энциклопедия, т. 16, էջ 337:

³ Հիմքում հին ժողովուրդների մեջ տարածված, տարիքային մի խմբից մյուսին անցնելու ինիցիացիայի՝ նվիրագործման ծեսն էր:

կամ Կույս)¹, Զինվոր (Ռազմիկ), Առյուծ, Պարսիկ (Պերս)², Արևային Վագորդ (Heliodromus) և Հայր: Ամենից հաճախ հանդիպում էր Առյուծը, իսկ «Հայր» աստիճանը ամենացանկալին էր³: Որոշ աղբյուրներում հիշատակվում է նաև «Հայրերի Հայր» աստիճանը⁴: Միայն ընծայաբերվածը կարող էր հաղորդակցվել միստիկական գիտելիքին՝ միհրականության դավանախոսությանը, կյանքում՝ աստծո աջակցությունը, իսկ հետո անմահության արժանանալու հույս ստանալ: Նա խորհրդանշաբար մեռնում և հարություն էր առնում ծեսի ընթացքում, հին մարդը մեռնում էր, ծնվում էր նորը՝ հոգևոր առավել բարձր գիտակցությամբ օժտված՝ իբրև ծիսական մահվան և վերածննդի գաղափարի մարմնավորում: Հատկանշական է «Հացի արարողությանը»: Թմբուկի վրա դրվում էին չոր հացի կտորներ: Նորընծան ուտում էր մի կտոր՝ դրանով ընդունելով, որ Միհրն է մարդկանց սնունդ տալիս:

Միստերիաների ամենատպալմորիչ ծեսը տավրաբուխան էր՝ ցլի արյունով լվացվելը: Փոս էին փորում, որի վրա կառուցվում էր փայտե հարթակ՝ ճեղքերով և անցքերով: Հարթակի վրա սպանում էին ցլին, որի արյունը կաթում էր փոսի մեջ գտնվող նորընծայի վրա: Նա իր ամբողջ հագուստը, գլուխը, վիզը, շուրթերը, աչքերը, ականջներն ու քթանցքները պահում էր արյան շիթի տակ: Արյունով թրջում էր նաև լեզուն, իսկ հետո խմում արյունը՝ որպես սրբազան գործողութ-

¹ Ծպտյալը ճակատին շղարշ էր կրում, իսկ ձեռքում՝ ջահ: Ասել է թե՛ «Ճշմարտության լույսը նրա համար սքողված էր առօրեականության քողով» (**Մարգարյան Ե.**, նշվ. աշխ. էջ 52):

² Պերս-պարսիկ-ը, ըստ Կյումոնի, կարող է նշել միթրայականության ծագման ակունքը՝ պարսկական ավագանը՝ հռոմեական տեսանկյունից (Տե՛ս **Кюмон Ф.**, նշվ. աշխ.):

³ Տե՛ս **Энгус С.**, Тайные культы древних Религии мистерий, пер с англ Н Ю Живловой, Москва, «Центрополиграф», 2013, ст 116:

⁴ Տե՛ս **Иванов П.В.**, Распространение митраизма как проявление маскулинных тенденций в религиозной жизни поздней Римской империи, Вестник ТГУ, 2004, выпуск 4(36), էջ 64-75:

յուն: Առավել հազվադեպ կատարվում էր ոչխարի զոհաբերություն՝ կրիորոլիա¹:

Նկատված և քննաբանված է միհրականություն-քրիստոնեություն առնչակցությունը: Չորրորդ դարից Միհրի պաշտամունքը հետզհետե իր տեղն է զիջել քրիստոնեությանը, երբ վերջինս հաղթանակել և ճանաչվել է պաշտոնական կրոն: Միհրականության մի շարք գծեր, ըմբռնումներ ու պատկերացումներ անցել են քրիստոնեությանը՝ Քրիստոսի ծննդյանը, Համբարձմանը, Հաղորդությանը վերաբերող և այլ իրողությունների տեսքով²:

Ագռավի և շան խորհրդաբանությունը միհրականության համատեքստում

Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի շատ ժողովուրդների պատկերացումներում **ագռավը** «արևային նշան» է, իմաստության, երկարակեցության, խորաթափանցության և կանխատեսման խորհրդանիշ, Հին Հռոմում՝ բնաձայնական նմանության հիմունքով (լատ. *cras* - վաղը)՝ հույսի խորհրդանիշ³: Ագռավը համարվում էր Արևի սպասավորը⁴: Հին հույների, պարսիկների, չինացիների ընկալումներում այն արևային աստվածների (Ապոլոն, Միթրա և այլն) սուրհանդակն ու լրաբերն էր՝ խորհրդանշելով հենց Արևը: Ջրհեղեղի մասին աստվածաշնչյան պատումում ագռավը փրկարար ցամաքը գտնողն է: Հյուսիսային Եվրոպայի ժողովուրդներից ագռավը առանցքային դեր է ունեցել վիկինգների մեջ՝ իբրև իմաստության, ռազմատենչ, կանխատես ոգու խորհրդանիշ: Միջնադարյան Եվրոպայում, թերևս վիկինգների՝ ահուսարսափ սփռող կերպարի ներազդմամբ, ագռավն ընկալվում է չարի

¹ Տե՛ս **Энгул С.**, նշվ. աշխ., էջ 123:

² Տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան 4 հատորով, հ. 3, էջ 701:

³ Տե՛ս **Вовк О. В.**, Энциклопедия знаков и символов, Москва, «Вече», 2008, էջ 244-245:

⁴ Տե՛ս **Кюмон Ф.**, նշվ. աշխ.:

ու մահվան, չարագուշակ նշանի իմաստով, և չնայած սրան՝ քրիստոնեության մեջ այս թռչունը նաև դրական իմաստավորում ունի՝ իբրև անապատում ճգնող մարգարեին կամ սրբին հաց բերող¹:

Առասպելական ընկալումներում **շունը** սովորաբար կապվում է մեռյալների թագավորության ստորերկրյա աշխարհի հետ: Այդպիսի առնչություններ են եգիպտական Անուբիսը, հինդուիստական Յաման իր երկու շներով, որ կոչվում էին «կյանքի առևանգիչներ» և մեռյալների հոգիները տանում էին անդրաշխարհ, հունական Հադեսը և մյուսները:

Շունը և ագռավը առանձնահատուկ դեր են ունեցել Միհր-Միթրայի պաշտամունքի՝ հայկական և պարսկական կրոնաձիսական համակարգերում և զրադաշտականության մեջ:

Հայտնի է, որ Միհրը Երվանդականների դինաստիական աստվածն է եղել, իսկ արդեն Արտաշեսյանների, մասնավորաբար՝ Տիգրան Մեծի օրոք, նույնացվել է Արամազդին: Մեծ Հայքի անմիջական հարևանությամբ գտնվող Կոմմագենեն, Ե. Մարգարյանի վկայությամբ, «այն հելլենիստական երկրներից էր, որտեղ արդեն նախահռոմեական շրջանում Միհրի պաշտամունքը փոխակերպվեց ավարտուն կրոնաիմաստասիրական համակարգի, որը մեր օրերում հայտնի է միհրականություն անվամբ»²: Նեմրոթ լեռան հայտնի դամբարան-սրբավայրը 50 մետր բարձրությամբ եռաշերտ թումբ է: Ե. Մարգարյանն այն համարում է Անտիոքոս Ա-ի հուղարկավորման ծեսի հետ կապված դաքմե՝ «Լուծության աշտարակ»՝ «հանգուցյալ թագավորի ոսկորների՝ փափուկ հյուսվածքներից անջատվելու վայր, իսկ ոսկորները պահվել են մեկ այլ տեղում՝ նաուսում՝ տոհմական հանգստարանում...»³: Ե. Մարգարյանը, վկայակոչելով Բ. ա. 1-ին դարի հեղինակ Պոմ-

¹ Տե՛ս **Вовк О. Б.**, նշվ. աշխ., էջ 244-245:

² **Մարգարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 41-42:

³ Նույն տեղում, էջ 45:

պետս Տրոգոսին, ապա և Կիկերոնին, բերում է ուշագրավ մի փաստ. ըստ այդ ծեսի՝ դիակը ծվատվում էր թոչունների¹ և շների կողմից (դրանք այդ նպատակով հատուկ բուծված սանիտար շներ էին, լեշակեր շներ՝ շնագայլ-չախկալի տեսակ), մաքրվում փափուկ հյուսվածքներից, որից հետո միայն ոսկորները թաղվում էին: Ե. Մարգարյանը կարծում է, որ Նեմրուծի քարաթումբը հենց այդպիսի նպատակով կառուցված բարձրադիր վայր է, որտեղ թողնվել է Անտիոքոսի դին, ապա ոսկորները հավաքվել ու թաղվել են ժայռափոր վիրապում: Այնտեղ արքայի աճյունը պիտի սպասեր էոնի՝ տիեզերական շրջափուլի ավարտին, երբ Միհրի վերջին դատաստանի ժամանակ ոսկորների վրա միա աճեր, և արքան վերածնվեր: Արձանախմբում առկա երկու արծիվները խորհրդանշում են արքայի դին ծվատող թոչուններին: Ուսումնասիրողն անդրադառնում է նաև հայոց արքաների ոսկորները քարախորշում որմնաշարելու ավանդույթին՝ այն տեսակետը հայտնելով, որ դա կապված է միհրական դավանախոսության հետ, ըստ որի «Միհրը, ինչպես և մեր էպոսի հերոսները ժայռածին են», «աստվածածին ժայռ» հարակցելով Ագռավաքարին²:

Համադրելով ասվածը և նկատի առնելով, որ միհրական ըմբռնումները Հայկական լեռնաշխարհում տարածված են եղել անհիշելի ժամանակներից, նաև այն, որ շան կերպարը երկակի է ընկալվել՝ որպես Առնակ³ և առլեգ՝ հոգեառ և հարություն տվող (այս դիտանկյունից նայելու դեպքում դա ինչ-

¹ Այս համատեքստում հիշատակվում են ագռավը կամ լեշակեր ուրուրը, որոնք միհրական գաղտնածիսության մեջ մարմնավորում էին մահը (տե՛ս **Մարգարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 52, թիվ 100 ծանոթ.):

² Տե՛ս նույն տեղը, էջ 48-49:

³ Ս. Հարությունյանի վկայությամբ՝ Շիրակում «Էրեսդ առնակավոր շները լիզեն» անեծքով մահ էին ցանկանում, որը «...ներկայացվում է «առնակավոր շների (=չար հոգեառներ) կողմից դեմքը լիզելու առասպելական պատկերով» (**Հարությունյան Ս.**, Մի դրվագ հայ առասպելաբանությունից, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1989, թիվ 1, էջ 157-166, էջ 158):

որ իմաստով միևնույն բանն է. շները, ոսկորները կրծելով, լիզելով, անդրաշխարհ ուղեկցելով, պիտի օգնեին, ապահովեին հետագա հարությունը՝ կարելի է ենթադրել, որ Արա Գեղեցիկի հարության երազանքի և տարբեր պատմիչների ու հեղինակների (Մովսես Խորենացի, Եզնիկ Կողբացի, Փավստոս Բուզանդ, Դավիթ Անհաղթ, Վարդան Արևելցի, Գրիգոր Խլաթեցի) կողմից վկայված հարալեզների մասին զրույցը կամ դրանց հիշատակումը, նաև Մուշեղ Մամիկոնյանի դրվագը նշված ծիսական սովորության ազդեցությամբ են ձևավորվել¹: Առլեզները կամ հարալեզները թերևս այդ հատուկ վարժեցված շների աստվածացված տարբերակներն էին: «Արքայազներին սնուցող» հատուկ վարժեցված շներն էին ձյունների մեջ գտել Սանատրուկին և նրա դայակին՝ թերևս ուղարկված լինելով նրանց դիակները գտնելու և նշված ծեսով հետագա հարությունն ապահովելու նպատակով: Այդպես Ագռավաքարում փակված է Սասնա տան վերջին արքան (ոսկորնե՞րը²), որին Միհրը (ըստ հնագույն պատկերացումների) և Քրիստոս (ըստ քրիստոնեական դավանաբանության («աշխարհը քանդվի ու նորից շինվի»)) պիտի «հարություն» տան, քարայրից դուրս բերեն, կյանքի կոչեն, երկրորդ կյանք տան...

Այս տեսանկյունից քննելով ագռավի և շան կերպարները հռոմեական՝ միհրականության ծեսն ու Միհրի մասին պատող ավանդազրույցի դրվագներն արտացոլող հարթաքանդակներում ու որմնանկարներում՝ նկատում ենք նրանց՝ փայտքոպոմպոս լինելու գործառույթը: Ագռավը երկնային ուժերի սուրհանդակն է, որ հաղորդում է Միհրին ցլին սպանե-

¹ Արա Գեղեցիկի դին և Մուշեղի մարմինը, համապատասխանաբար դրվում են ապարանքի վերնատանը (տե՛ս **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., «Հայպետհրատ», 1961, էջ 111) և աշտարակի երդիկի վրա (տե՛ս **Փավստոս Բուզանդ**, Հայոց պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1987, էջ 363):

² Այստեղ հարկ է ի մտի առնել ռուսերեն *косточка* բառի «ոսկրիկ» և «կորիզ» իմաստները:

լու հրամանը: Ինչպես իրավացիորեն ընդհանրացնում է Ա. Պետրոսյանը, հերոսի և ագռավի հանդիպման մոտիվը սովորաբար առկա է քարից կամ ժայռից ծնված հերոսների մասին պատմող միջերի վերջնամասում¹: Մեր ազգային էպոսում Փոքր Մհերը վիրավորում է խոսող ագռավին, և նա Մհերին ուղեկցում է քարանձավ, որը կոչվում է Ագռավաքար: Հռոմեական պատկերներում ագռավը միթրոս-քարանձավի մուտքի մասում է հաճախ² (նկ. 1):



Նկ. 1

Նաև հիշենք, որ ընծայաբերման առաջին աստիճանը հենց ագռավն է: Ուղեկցելը, ըստ միհրականության ընկալումների, ոսկորները փափուկ հյուսվածքներից ազատելն է:

¹ **Петросян А.**, Армянский Мхер, западный Митра и урартский Халди, <https://vk.cc/cpnc9>, հղման ամսաթիվը՝ 30.06.23.

² Տե՛ս **Иванов П.В.**, Распространение митраизма как проявление маскулинных тенденций в религиозной жизни поздней Римской империи, Вестник ТГУ, 2004, выпуск 4(36), էջ 73:

Այդպես շներն են Արտավազդին «ուղեկցում» ժայռի խոռոչ ու այնտեղ կրծում նրա շղթաները՝ փորձելով տիրոջն ազատել կաշկանդումից: Հռոմեական պատկերակերտումներում շունը Միհրին օգնում է ցլին բռնելու, լիզում է ցլի վերքից հոսող արյունը, օգնում է ցլի հոգուն երկինք բարձրանալու: Շունը պատկերված է կարիճի և օձի՝ Ահրիմանի չար ոգիների կողքին. արդյո՞ք նրանց «կծածը» չեզոքացնելու նպատակով չի կարգված նա՝ ունենալով երկակի իմաստավորում:

Ժամանակին հանգուցյալի հետ թաղում էին շներին՝ անդրաշխարհում ևս նրան հավատարիմ ծառայելու և պահպանելու հավատալիքով, նաև հարություն տալու գործառույթը նկատի ունենալով: Ըստ Ս. Հարությունյանի՝ նաև տիրոջ մահը չեզոքացնելու համար մահը կանխազգացող ոռնացող շանն էին զոհաբերում: Կամ, օրինակ, տաջիկները հաց էին խցկում մահ կանխազգացող շան երախը՝ նախապես փայտով խփելով¹: Ս. Հարությունյանը, անդրադառնալով հայոց մեջ տարածված առաջին թխված հացը շանը տալու սովորության և շան՝ հանուն մարդու կենսապահովման երկնքի և երկրի միջնորդ լինելու գործառույթին, բերում է համապատասխան գրույցը, ըստ որի՝ այն ժամանակ, երբ աշխարհում դեռ հաց չի եղել, շունը քաղցից այնքան է ոռնացել, որ երկնքից հատիկ է ընկել, ծլել, ու աշխարհը լցվել է հացով²: Բանագետը հաջորդիվ կարևոր գուգահեռների՝ Արա Գեղեցիկի՝ հացաբույսերի հատիկային աստվածության և նրա հետ կապվող, ծլարձակմանը և հարությանը նպաստող շնակերպ հարալեզների, հացահատիկը մարմնավորող Օսիրիսի և նրա հարությանը նպաստող Անուրիս շան կերպարների վկայակոչմամբ արժեքավոր ընդհանրացումներ է անում՝ մեկ անգամ ևս հաստատելով շան՝ «մահացնողի» և «հարություն տվողի» երկակի ընկալումը, միջնորդական գործառույթը

¹ Տե՛ս Ս. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 162:

² Տե՛ս նույն տեղը, էջ 164:

այսրաշխարհի և անդրաշխարհի, կյանքի ու մահվան միջև¹: Ինչպես արդեն նշեցինք, միհրական դավանախոսության տեսանկյունից հարցը քննելիս միանգամայն բացատրելի է դառնում այդ երկակիություն-երկվությունը. շունը, մեռյալի փափուկ հյուսվածքները կրծելով, նրան մահվան զարշությունից մաքրելով, ուղեկցում էր անդրաշխարհ՝ նպաստելով ապագա հարության հնարավորությանը:

Հողում ճեղքվող հատիկը, ծլարձակած հատիկը ու հետո հասկը՝ աշխարհ պիտի կերակրեն: Արարված հացը բոլորն են ուտում՝ չար ու բարի, «յուրային» ու «օտար»: Սա հետո քրիստոնեության մեջ պիտի ձևակերպվեր «երեխաների բաժինը շների առաջ նետելու» արգելքով², բայց, միևնույնն է, «շները» ուտում են «երեխաների» սեղանի փշրանքները՝ մարդը գիտի: Ահրիմանի, իմա՝ չարի ծառաները պիտի փորձեն գողանալ իրենց բաժինը, խանգարել հացով մարդու լիանալուն, բայց մարդը գիտի՝ իրենք իրենց բաժինը տանելու են. այդպես է աշխարհի կարգը: Ուստի տալիս է նրանց բաժինը, նախապես մտովի հրաժարվում հացի այդ մասից, հաշտվում հացի մասնակի կորստի հետ: Հռոմեական հարթաքանդակներում զոհաբերված ցլի արյունից և սերմից իրենց բաժինն են վերցնում կարիճը, օձը և շունը: Ինչպես արդեն նշեցինք, շունը, բացի այն բանից, որ իր բաժինն է վերցնում, միևնույն ժամանակ մահվան խայթն է չեզոքացնում լիզելով, ապահովում անցումը կյանքից մահվանը՝ հետագա հարությանն ի խնդիր՝ ունենալով երկակի դեր, դառնալով մահվան ու կյանքի միջնորդ: Կարիճը և օձը մահվան գործիքներ են, մարդու բաժինը խլողներ: Մարդը առավել մեծ բաժին է աղերսում, երազում առատ պտղաբերման, ցորենի՝ մասուրի չափ, զարու՝ ընկույզի չափ դառնալու մասին: Դրան էր ուղղված Միհրի առաքելությունը, և դա էր արտացոլում Փոքր Միհրի պայմանը:

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 165:

² Ավետարան ըստ Մարկոսի, 7:25-30:

Ցույը՝ որպես ցորնահատ. գոհաբերման խորհուրդը

Հռոմեական հարթաքանդակների ու որմնանկարների՝ Միհրի մասին պատմող և միստերիաները արտապատկերող դրվագները տարակերպ մեկնաբանություններ են ստացել՝ իբրև աշխարհի արարում¹, որպես ագրարային տարվա բոլորաշրջանը և արևի ու որոշ համաստեղությունների (Ցլի, Առյուծի, Կույսի, Շան և այլն) դիրքային հերթագայում-համապատասխանությունները ներկայացնող գաղտնագրումներ, հնդիրանական հավատալիքների, գրադաշտական ընկալումների, հունական գաղտնածիսության ու բաբելական աստղաբաշխության ըմբռնումների, Պլատոնի փիլիսոփայության որոշ դրույթների² փոխներթափանցված դրսևորումներ։ Ուսումնասիրողները ընծայաբերման աստիճանների մեջ տեսել են նաև կենդանակերպի նշանների պլուզիաներ և նույնիսկ մետամփսիխոզի ու վերամարմնավորման դրսևորումներ։ Նշված դրվագներում արտացոլվել են նաև չորս տարերքները՝ օդ-ագռավ, կրակ-առյուծ, հող-օձ և ջուր-գավաթ համապատասխանություններով³։ Ֆ. Կյումոնը, օրինակ, միստերիաների ժամանակ կատարվող դիմակահանդեսի տարընթերցումները բացատրում է նրանով, որ դրանց իրական իմաստը ժամանակի ընթացքում կորսվել է։ Նա դրանք համարում է պաշտամունքային շատ համակարգերի վրա իրենց հետքը թողած նախնադարյան ծեսերի մնացուկներ⁴։ Այս և այլ բազում մեկնաբանությունները իսկության շուրջ պտտվող վարկածներ են, և մենք, հայտնատեսելով պաշտամունքային այդ վաղնջական համակարգի հնարավոր նախահիմքը, որը թերևս մարդու՝ հացի նախնական ու հիմ-

¹ Տե՛ս **Merkelbach R.**, Mithraism, Mythology and theology, <https://vk.cc/cpnoeH>, հղման ամսաթիվը՝ 30.06.23:

² Տե՛ս նույն տեղը:

³ Տե՛ս նույն տեղը:

⁴ Տե՛ս **Κυμον Φ.**, նշվ. աշխ.:

նական պահանջմունքն էր, փորձենք ներկայացնել մեր մեկ-նաբանական վարկածը:

Ցլի խորհրդանշական իմաստն ընդգրկում է մի քանի բաղադրիչներ՝ նախաստեղծ քառսի¹, խավարի, ամպրոպի աստծո², ֆիզիկական ուժի, բնության տարերային կործանող ուժի, աստվածային և արքայական իշխանության, արական սեռականության և պտղաբերության: Միհրականության համատեքստում այն մահվան և հարության խորհրդանշ է³:

Միհրի՝ ցլին բռնելու և նրա կամքին հակառակ, բռնությամբ քարանձավ տանելու, սպանելու և դրա արդյունքում բուսական ու կենդանական աշխարհի՝ պտղաբերության և սերնդագործման հիմքը դնելու, երկու կողմերի՝ Միհրի և Արևի դաշինքի պատմությունը հիշեցնում է հունական դիցաբանությունից՝ Հադեսի կողմից Պերսեփոնեի առևանգման, անդրաշխարհ տանելու և բռնությամբ կնության առնելու դրվագը⁴: Առաջին դեպքում երկնային կամքն է ուղղորդում հերոսին, երկրորդ պատմության մեջ ևս Ջեսի կամքով է կատարվում Պերսեփոնեի առևանգումը, որին ականատես է լինում Հելիոս-Արևը: Մոր՝ Դեմետրայի համառ ջանքերով համաձայնություն է ձեռք բերվում, որ Պերսեփոնեն տարվա երկու երրորդը մոր մոտ՝ այսրաշխարհում, մեկ երրորդը անդրաշխարհում պիտի անցկացնի, որը խորհրդանշում էր բնության ծաղկումն ու թռչումը: Հիշենք, որ Պերսեփոնեն Դեմետրայի՝ պտղաբերության և երկրագործության, հասկի հասունացման աստվածուհու դուստրն էր: Նրա խորհրդանշներից է հացահատիկի սերմը: «Կարելի է ասել, որ Պերսեփոնեն հենց պտուղն է, ցորենը, որը ցանվում է հողում, բող-

¹ Տե՛ս **Մարգարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 50:

² Տե՛ս **Պետրոսյան Ա.**, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Եր., 1997, <https://vk.cc/cpno7f>, հղման ամսաթիվը՝ 30.06.23:

³ Տե՛ս **Божк О. В.**, նշվ. աշխ., էջ 170-172:

⁴ Տե՛ս **Կուն Ն.**, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Թարգմ. Լ. Հախվերդյանը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1979, էջ 66-72:

բոջում, ցողուն, տերև ու պտուղ տալիս»¹: Պահպանված քանդակներում Պերսեփոնեի գլխին ծլած հատիկ է կարծես (Նկ. 2², 3³):



Նկ.2



Նկ.3

Նա ինքը ճեղքված-ծլած հատիկն է: Հունական դիցաբանության մեջ Պերսեփոնեն համարվել է «ստորգետնյա թագավորության տիրուհի, հացաբույսերի աճման և երկրային պտղաբերության աստվածուհի, որի պաշտամունքին հետա-

¹The Myth of Persephone is about Earth, Seasons, and Motherly Love, <https://vk.cc/cpnodA>, հղման ամսաթիվը՝ 30.06.23:

² Պերսեփոնե-Ափրոդիտեի արձանիկը, Սիրակուզայի հնագիտական թանգարան, Իտալիա, լուսանկարը <https://vk.cc/cpnoUd>, հղման ամսաթիվը՝ 30.06.23

³ Իսիս-Պերսեփոնեի բոժոժով արձանը, Հերակլիոնի հնագիտական թանգարան, Հունաստան, <https://vk.cc/cpnoUd>, հղման ամսաթիվը՝ 30.06.23

գայում միաձուլվել է կույս աստվածուհի Կորայի¹ պաշտամունքը²: Նշված երեք աստվածուհիների «պաշտամունքի ընդհանրությունը պահպանվում է հին Հունաստանի ամբողջ պատմության ընթացքում»³: Պերսեփոնեի ամենամյա վերադարձը մեռյալների թագավորությունից մեռնող և հարություն առնող աստվածության մասին (Օսիրիս, Ադոնիս և ուրիշներ) հնում տարածված առասպելների տարբերակներից մեկը պիտի համարել: Առասպելը խորհրդանշում է բուսական աշխարհի թոշնումն ու ծաղկումը, «հողի մեջ նետված՝ անկենդան թվացող ցորենի հատիկի ծլարձակումը»⁴: Պերսեփոնեն ոչ միայն կարգավորում էր երկրի պտղաբերությունը, այլև իշխում հողին հանձնված մեռյալների վրա: Այսու իսկապես, Պերսեփոնե կույս-հատիկի, ցորենահատ-աղջկա առևանգումը և հողի տակ կնության առնելը նմանաբերվում է Միթրա-Միհրի՝ ցլին առևանգելու և քարանձավում դաշույնով ճեղքել-սպանելու դրվագին: Երկուսի առանցքում էլ թե՛ միթրայական, թե՛ էլեսինյան միստերիաներում արտապատկերվող պտղաբերության իմաստային դաշտն է: Ինչպես արդեն ասվել է, հռոմեական որմնանկարներում և հարթաքանդակներում զոհաբերվող ցուլը պատկերված է ցորենի հասկի նմանվող պոչով՝ հիշեցնելով ծլած ցորենահատ: Նկատի առնելով

¹ Կորե (korē) հունարեն նշանակում է կույս, աղջիկ, դրա հետ է կապվում լատիներեն *crescere* – աճել բառը, տե՛ս <https://vk.cc/cnp66g>, հղման ամսաթիվը՝ 30.06.23: Ի դեպ, *weizenkorn* գերմաներեն նշանակում է ցորենի հատիկ, *corn* անգլերեն՝ հացահատիկ:

² Այս ամենի լույսով կարելի է մեկնաբանել ընծայաբերման աստիճաններից Պերսի և Ծպոյայի (անվանում էին նաև Գին կամ Կույս) կերպարները: Դրանց՝ հնարավոր, հետագայում մթագնած և տարբեր մեկնաբանություններ ստացած նախահիմքում գուցե Կորա-կույսն է՝ Պերսեփոնեն երկու կերպարների տրոհված. բացառված չէ էլեսինյան միստերիաների ազդեցությունը Հռոմեական կայսրություն ներթափանցած միհրանության վրա:

³ Դիցաբանական բառարան, Մ. Ն. Բոտվիննիկ և ուրիշներ, թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյան, Եր., «Լույս», 1985, էջ 197-198:

⁴ Նույն տեղում, էջ 198:

Պերսեփոնե-կույս հատիկի վերոնշյալ ընդհանրությունը, պտղաբերության և կենսանորոգման նպատակով կատարվող ծեսի խորհրդաբանությունը, Միհրի՝ ցլին քարանձավ երկրի խորքը, հողի տակ, քարշ տալու և այնտեղ զոհաբերելու, դաշույնով «ճեղքելու» դրվագը, կարող ենք ձևակերպել մի մեկնաբանական վարկած, ըստ որի՝ ցուլը (հռոմեական որմնանկարներում և հարթաքանդակներում՝ ճերմակ¹) կարող է խորհրդանշել հացահատիկը, որի՝ հողի տակ ճեղքվելով է հնարավոր պտղաբերությունը՝ նոր հասկի ձևավորումը: Ինչպես Աստվածաշնչում է նշվում, «...եթե ցորենի հատիկը հողի մեջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կմնա, իսկ եթե մեռնի, բազում արդյունք կտա»²: Ըստ միհրականության ծիսակարգի՝ ցլին սպանելուց հետո Միհրը դաշինք է կնքում Արևի հետ: Միհրի՝ միջնորդ-մշակողի և արևի գործակցությամբ է հնարավոր պտղաբերումը: Ծեսը կատարվում էր երկրի ընդերքում՝ քարանձավ-միթրեումում, գաղտնի, սովորաբար գիշերը: Հատիկի ճեղքվելը և ծիլ տալը ևս թաքնված են մարդկային աչքից:

Հնագիտական արտեֆաստերը վկայում են, որ մինչհնդեվրոպական առասպելական ընկալումներում առկա է եղել ցլի մարմնից հացահատիկի ծլարձակման մասին պատկերացումը: Եգիպտական հնագույն պատկերացումների համաձայն ևս հացահատիկը ծլարձակում է Օսիրիսի մարմնից, որի խորհրդանիշը ցուլն էր: Հատկապես ուշագրավ է Միկենյան քաղաքակրթությունից պահպանված Ք. ա. 1500 թվականի մի կնիք, որի վրա ակնհայտորեն երևում են ծլարձակած մարմիններով երկու ցլիկներ: Երևույթն ամբողջացնում է նրանց միջև պատկերված հատիկը, որից ցլի կոտոշների

¹ Ճերմակ էին նաև Անահիտ աստվածուհուն զոհաբերվող ցլերը:

² Աստվածաշունչ մատյան Հին և Նոր Կտակարանների, Ավետարան ըստ Հովհաննեսի, 12:24, Արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2017:

նման երկու ծիլերն են ելնում, իսկ կենտրոնից՝ հասկի նման բարձրացած բույս (նկ. 4)¹:



Նկ. 4

Մ. Էլիադեն, քննաբանելով Հայնուվելեի մասին առասպելը, նկատում է նախաստեղծ ցլի մարմնից բույսերի առաջացման մոտիվը: Ըստ այդ առասպելի՝ զոհաբերված և թաղված աղջկա մարմից են ելնում ուտելի բույսերը²: Ակնհայտորեն պատկերագծվում են ցուլ-ցորեն նույնությունը, ցուլկույս-հատիկ առնչությունը, և, համապատասխանաբար, այս շարքը համարում է նաև Քրիստոսը:

Բառիմաստային ուշագրավ զուգահեռները մտածելու տեղիք են տալիս: «Ցուլը» բնիկ հայերեն բառ է և, ըստ ԱՃառ-

¹ Տե՛ս **Асгары Л.**, О символике связи быка и растений в пехлевиийском «Бундахишне», Религиоведение, 2019, № 4, <https://religio.amursu.ru/images/Volumes/2019/4/1-.pdf>, հղման ամսաթիվը՝ 30.06.23:

² Տե՛ս **Eliade M.**, History of Religious Ideas, Volume 1, From the Stone Age to the Eleusinian Mysteries, Translated by Willard R. Trask, The University of Chicago Press, 1978, 508 էջ:

յանի, ծագում է հնդեվրոպական նախալեզվի skulu- ձևից¹, որը հունարենում պահպանվել է «շնիկ», «շան ձագ», «անասունի ձագ», նաև «առյուծի կորյուն» իմաստներով: Հունարենի պարագայում ակնհայտորեն գերիշխում է «ձագ»-ի իմաստը: «Ծիլ»-ը ևս բնիկ հայերեն բառ է, հնդեվրոպական արմատ²: Այդ իմաստով ունենք նաև ընձյուղ և բողբոջ բառերը: Յլեպ տալ (նույնն է ծլեպ տալ) նշանակում է բողբոջել³: Յլեպ-ի արմատը գուցե ցել=ճեղքն է, սակայն կա նաև ծլեպ տարբերակը: Ցուլ բառի հոմանշային շարքում նշվում են ցլիկ և ընջուղ տարբերակները⁴: Ընջուղը (ընջուղ) «երինջ» իմաստով ևս Գ. Զահուկյանը համարում է «թերևս բնիկ հնդեվրոպական՝ *andh- «բողբոջել, ծաղկել» արմատից» ծագած բառ⁵: Ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի ընջուղը «որձ հորթ»-ն է⁶: Հր. Աճառյանի բառարանում բերված «ընձյուղ» և «ընջուղ» բառահոդվածներում տարբեր հեղինակների ստուգաբանությունների համադրությունը պարզում է հետևյալ պատկերը՝ ծիլ-ծիղ⁷-ճյուղ-ձյուղ-ընձյուղ-երինջ-ընջյուղ-ընջուղ. վերջինը Խարբերդի բարբառում ևս նշանակում է «փոքրիկ չկոտած հորթ»⁸: «Ընծուիլ» բառահոդվածում Աճառյանը դիտարկում է «ծագիլ, բղիսիլ», «ծլիլ, բուսնիլ» իմաստներ

¹ **Աճառեան Հր.**, Հայերեն արմատական բառարան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Եր., 1926, հ. 4, էջ 462:

² Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, «Աստղիկ» հրատարակչություն, Եր., 2010, էջ 362:

³ Տե՛ս **Սուքիասյան Ա.**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Հայկական ՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1967, էջ 638:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 640:

⁵ Տե՛ս **Զահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 250:

⁶ Տե՛ս **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան», Եր., 1976, հատոր 1, էջ 407:

⁷ Հանրագիտարանային փաստ է, որ հնում պտղաբերության աստվածուհի, «ոսկեհատ», «ոսկեծղի», «ոսկեմայր» Անահիտին էին գոհաբերում առաջին բերքը և սպիտակաթույր սրբազան ցլեր:

⁸ Տե՛ս **Աճառեան Հր.**, Հայերեն արմատական բառարան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Եր., 1926, հատոր 2, էջ 131:

ըը՝ բուն արմատը համարելով «ինձ»-ը, որտեղից էլ՝ ընձյուղ տարբերակը¹: Բացառված չէ, որ ընջուղ-ընձյուղ-ծիլ շարքի կամ ցլեպ տալ - բողբոջել իմաստի հիմքում փոքրի նշանակությունն է, սակայն հիշենք, որ հնդեվրոպական նախալեզվի skulu- ձևը, որից Աճառյանը բխեցնում է ցուլ բառը, հունարենում պահպանվել է ձագի իմաստով: Այսինքն՝ skulu- ձևում, ցուլ բառի մեջ նախապես եղել է ծիլ-ձագի իմաստը, և ցլիկ նշանակող ընջուղի միջոցով կարծես պատկերագծվում է ցուլ-ծիլ կապը:

Համեմատական քննությունը շարունակելով՝ դիտարկենք ցորեն-ցուլ հնարավոր առնչությունը: Հր. Աճառյանը ցորեան բառի ստուգաբանության պատմությունը ներկայացնելիս նշում է սանսկրիտերենում առկա ṣulā բառը, որը «...գտնում է kuṣulā «ինչքան ցորեն ունեցող» բառի մեջ»²: Kuśula /kuzUla/ նշանակում է նաև ամբար, հացառատ վայր³: Ի դեպ, իսպաներեն zool և toro նշանակում է ցուլ: Աճառյանը բերում է նաև հին իռլանդերեն tuireann և սանսկրիտերեն trna-խոտ բառերը: Ղևոնդ Ալիշանը նշում է հին իռլանդերենի tuireana բառը ցորենի իմաստով⁴: Ցուլ բառահոդվածում Աճառյանը հիշատակում է սանսկրիտերեն ṣulā-նիզակ⁵ և ṣurā վարազ բառերը՝ չր արմատից՝ բերելով նաև հունարեն Ταύρος և լատիներեն taurus ձևերը, հյ. դաուր, հսլ. turı ձևը⁶: Պետք է նշել նաև «տուր» տարբերակը՝ նախնադարյան վայրի

¹ Տե՛ս նույն տեղը:

² **Աճառեան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատոր 4, էջ 461:

³ Տե՛ս Словарь санскрита, Русско-санскритский словарь, Около 30 тысяч слов санскрита, <https://www.learnsanskrit.ru/>, հղման ամսաթիվը՝ 30.06.23:

⁴ **Հայր Ղևոնդ Ալիշան**, Հայբուսակ կամ Հայկական Բուսաբառություն, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1895, էջ 624:

⁵ Ցորենի հասկի նմանություն:

⁶ Տե՛ս **Աճառեան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հատոր 4, էջ 462:

ցլի անվանումը¹: Գ. Ջահուկյանը ցորեանը կամ ցուրեանը համարում է անհայտ ծագումով բառ՝ ենթադրաբար կապելով հնդեվրոպական *ke'r- «աճել, սնել» արմատի հետ²: Նկատի առնելով ց բարդ հնչյունի պարզեցման հնարավորությունը և վերոնշյալ տարբերակները՝ ց>թ-ս, հաջորդիվ թ>տ-հ տրոհումները, լ>ր, ր>լ անցումները՝ հավանական ենք համարում ցորենի և ցլի կապը՝ ցր- արմատից՝ ցուր (եան), տուիրեան (ցորեն), զուլա (ցորեն), ցուլ, տուր, զուլ, տորո, տուրի (ցուլ): Ի դեպ, նմանօրինակ առնչություն ենք տեսնում նաև անգլերեն հետևյալ բառերում՝ corn (հատիկ, հացահատիկ), horn (կոտոշ՝ այդոթ ծիլի նմանողությամբ), core (միջուկ), grain(հատիկ, հացահատիկ), thorn (փուշ)՝ հավանաբար հնդեվրոպական նույն cl>cr կամ cr>cl արմատից:

Ձ. Ֆրեզերի վկայությամբ հացի ոգին հաճախ ցլի, կովի կամ եզան կերպարով էր պատկերացվում: Միլեզիայի բնակիչները (Կենտրոնական Եվրոպա) հացահատիկի բերքահավաքից հետո վերջին խրճին, որ ցորնահասկերով էր փաթաթվում, կոտոշավոր ցլի տեսք էին տալիս: Դիժոնի մերձակայքում (Ֆրանսիա) հացահատիկի բերքահավաքի վերջում արտում եզ էին զոհաբերում՝ մսի մի մասը ընթրիքին ուտելով, իսկ մյուս մասը պահելով մինչև ցանքսը: Շոտլանդացի նշանավոր գիտնականը նաև նշում է, որ հացահատիկի երիտասարդ ոգին, որն ապահովում էր հաջորդ տարվա բերքի աճը, աշխարհ էր գալիս հունձքի ժամանակ արտում Հացամանուկի տեսքով: Համանման մեկ այլ պատկերացման համաձայն՝ հացահատիկի ոգին հորթուկի տեսք ուներ, և Ավստրիայի որոշ շրջաններում գյուղացիները կարծում էին, որ զարնանը նա ցատկոտում է հացահատիկի ծլած արտերում ու մանուկ-

¹ St' u **Банников А. Г., Флинт В. Е.** Отряд Парнокопытные (Artiodactyla) // Жизнь животных / под ред. В. Е. Соколова, 2-е изд., Москва, «Просвещение», 1989, Т. 7. Млекопитающие, էջ 516-517:

² St' u **Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 744:

ներին պոզահարում: Քամուց ծփացող արտին նայելով՝ գյուղացիներն ասում էին, որ հորթուկն է խայտում: Ֆրեզերը համամիտ է Մանհարդտին՝ այն տեսակետը հայտնելով, որ զարնանային հորթուկը նույնական է ցորենի բերքահավաքի ժամանակ զոհաբերվող կենդանու հետ¹:

Հացի արարման առանցքում ցորեն-ցուլ(եզ)-ի չարչարանքի իմաստաբանությունն է: Եզի չարչարանքին՝ վարին, հաջորդում են հողում հատիկի ճեղքումը, ապա ծիլի՝ հողը ճեղքելու՝ ծլարձակելու և վերընձյուղվելու ջանքը², հասկի հատումը՝ հունձքը, հասկի կալումը, ցորենը աղալու, խմորը հունցելու և հացի՝ կրակի փորձությանը դիմանալու, այդ փորձությունը անցնելու՝ թխվելու հերթադիր օղակները: Միհրական ավանդազրույցում ներկայացվող ցլասպանության դրվագում ցլի չարչարանքը՝ Միհրի խոցումը, օձի, կարիճի խայթը, շան առկայությունը (վերջինի դեպքում՝ որոշ վերապահումով) կարծես հատիկի «չարչարանքի» պատկերավորումն է: Խաչի վրա Քրիստոսի չարչարանքը հիշեցնող դրվագ է սա, մանավանդ այս դեպքում էլ կա գեղարդով խոցում: Ինչպես ասվել է արդեն, միթրայական միստերիայի ժամանակ ցլի արյունը ցողվում էր ընծայաբերվողի վրա՝ ապահովելով նրա հոգևոր մաքրագործումը և հետագա վերածնունդը: Սա իր հերթին նմանաբերվում է Գողգոթայի բլուրի վրա Հիսուսի խաչվելու պատկերին. նրա արյունը խաչի վրայից ծորում և հասնում է բլուրի տակ թաղված Ադամի գանգին՝ ջնջելով նախաստեղծ մեղքը, հաղթում մահին և հավիտենական կյանքի հնարավորություն ստեղծում³: Հիշենք, որ Յորնահատ Հիսուսի կատարած հրաշքներից մեկը հացի բազմացումն է: Յլի զոհաբերությունը ևս կատարվում էր

¹ St' u **Фрээр Дж.**, Золотая ветвь, Москва, Изд. «Транзиткнига», 2006, էջ 477- 480:

² Այս երկուսը կազմում են մահ-հարություն փոքր շղթա:

³ «Ո՛ւր է, ով մահ, քո խայթոցը, ո՛ւր է, ով գերեզման, քո հաղթությունը» (Ա. Կորնթ. 15:55):

պտղաբերության՝ հացի բազմացման համար: Այսու՝ Փոքր Մհերն էլ իր հերթին հողին պահ տրված, հայրական և աստվածային (կռիվը հոր և հրեշտակի հետ) կարգի և զոհաբերման (ինքնագոհաբերման) օրենքի դեմ ըմբոստացած, (դեռևս) ամուլ ցորնահատն է:

Այսպիսով, Միհրը մշակութային հերոսն է, մշակողը, մշակույթ կերտողը, որը, սանձահարելով բնության տարերային ուժը (այն ցլի խորհրդաբանության բաղադրիչներից մեկն է), կարգաբերում է քառսը և խավարը (սրանք ևս ցլի նշանակելիներն են), կարգ է հաստատում: Օրինաչափորեն հակադրվում են մշակույթ-բնություն, լույս-խավար, կոսմոս-քառս եզրերը: Եթե արևը խորհրդանշում է լույսի նյութականությունը, Միհրը իմացական լույսն է: «Հակառակ ընդունված կարծիքի Միհրը չէր նույնացվում Արևին: Ի տարբերություն վերջինիս, որը ֆիզիկական լույսի աստվածն էր, Միհրը մարմնավորում էր հոգևոր լույսն ու ճշմարտությունը»¹: Աշխարհակարգի պահպանումը, մշտանորոգումը հնարավոր է նյութականի և իմացականի դաշինքով, դաշինքի շնորհիվ:

Ըստ Կյումոնի՝ Միհրը ալեքսանդրիական լոգոսի նման միջնորդ էր, ինչպես հետագայում Քրիստոսը՝ երկնային հոր և մարդկանց միջև²: Քրիստոսի կերպարում ձուլվում-նույնանում են զոհն ու զոհաբերողը՝ Միհրը և ցուլը, հատիկը և ճեղքողը. առանցքում ինքնագոհաբերման գաղափարն է: Քրիստոսը ինքնաբաշխվող հացն է³, բազում արդյունք ապահովող ճեղքվող ցորնահատը: Փոքր Մհերը ազգային էպոսում քարանձավում պահված այն ցորնահատն է, որը դեռ չի ծլարձակել՝ հայրական անեծքով դատապարտված լինելով ամուլության: Նա չի կատարել ինքնագոհաբերման ծեսը հանուն վե-

¹ Տե՛ս **Մարգարյան Ե.**, նշվ. աշխ., էջ 38:

² Տե՛ս **Кюмон Ф.**, նշվ. աշխ.:

³ Հիսուսը նրանց ասաց. «Ես եմ կենաց հացը. ով դեպի ինձ գա, չի քաղցի, և ով ինձ հավատա, երբեք չի ծարավի», Ավետարան ըստ Հովհաննու, 6:35:

րաճննդի՝ սպասելով դրսից միջամտության: Նա չի փոխում աշխարհը. սպասում է աշխարհի փոխվելուն: Պատահական չէ, որ կենսականորեն անհրաժեշտ անձնագոհությունը դառնում է մեր գրական մտածողության՝ համառ հետևողականությամբ տարփոդվող գաղափարը:

Գրականություն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., հատոր 1, 1976
2. Աճառեան Հր., Հայերեն արմատական բառարան, Երևան, Երեւանի Համալսարանի Հրատարակչություն, հատորներ 2, 4, 1926
3. Աստվածաշունչ մատյան Հին և Նոր Կտակարանների, Արևելահայերեն նոր խմբագրություն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2017
4. Դիցաբանական բառարան, Մ. Ն. Բոտվիննիկ և ուրիշներ, թարգմ.՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, «Լույս», 1985
5. Կուն Ն., Հին Հունաստանի լեզենդներն ու առասպելները, թարգմ. Լ. Հախվերդյանը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1979
6. Հայկական համառոտ հանրագիտարան 4 հատորով, հ. 3, Երևան, «Կոտայք-Նոր դար», 1999
7. Հայր Ղեւոնդ Ալիշան, Հայբուսակ կամ Հայկական Բուսաբառություն, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1895
8. Հարությունյան Ս., Մի դրվագ հայ առասպելաբանությունից, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1989, թիվ 1, էջ 157-166
9. Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, «Հրազդան», 2002
10. Մարգարյան Ե., Միհրականության կերպավորությունները հելլենիստական դարաշրջանում (Կոմմագենե, Մեծ Հայք, Հռոմ), «Վեմ» համահայկական հանդես, 2012, Դ (Ժ) տարի, թիվ 3 (39), էջ 31-64

11. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, «Հայպետհրատ», 1961
12. Պետրոսյան Ա., Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան, 1997, <https://vk.cc/cpno7f>
13. Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Աստղիկ» հրատ., 2010
14. Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երկրորդ հրատարակություն, Երևան, «Հայպետհրատ», 1961
15. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, Հայկական ՄՄՀ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1967
16. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1987
17. Асгари Л., О символике связи быка и растений в пехлевийском «Бундахишне», Религиоведение, 2019, № 4, <https://religio.amursu.ru/images/Volumes/2019/4/1-.pdf>
18. Банников А. Г., Флинт В. Е. Отряд Парнокопытные (Artiodactyla) // Жизнь животных / под ред. В. Е. Соколова, 2-е изд., М.: Просвещение, 1989, Т. 7. Млекопитающие
19. Большая советская энциклопедия, т. 16, Москва, «Советская энциклопедия», 1974
20. Вовк О. В., Энциклопедия знаков и символов, Москва, «Вече», 2008
21. Дарол А., Тайные общества, Москва, «Крон-Пресс», 1998
22. Иванов П.В., Распространение митраизма как проявление маскулиных тенденций в религиозной жизни поздней Римской империи, Вестник ТГУ, 2004, выпуск 4(36), с. 64-75
23. Кюмон Ф., Мистерии Митры, <https://vk.cc/cpno6i>
24. Петросян А., Армянский Мхер, западный Митра и урартский Халди, <https://vk.cc/cpnoc9>
25. Словарь санскрита, Русско-санскритский словарь, Около 30 тысяч слов санскрита, <https://www.learnsanskrit.ru/>
26. Фрэзер Дж. Дж., Золотая ветвь, Москва, Изд. «Транзиткнига», 2006

27. Энгус С., Тайные культы древних. Религии мистерий, пер. с англ. Н. Ю. Живловой, Москва, «Центрополиграф», 2013
28. Eliade M., History of Religious Ideas, Volume 1, From the Stone Age to the Eleusinian Mysteries, Translated by Willard R. Trask, The University of Chicago Press, 1978, 508 p.
29. The Myth of Persephone is about Earth, Seasons, and Motherly Love, <https://vk.cc/cpnodA>
30. Merkelbach R., Mithraism, Mythology and theology, <https://vk.cc/cpnoeH>

■ ЛИЛИТ СЕЙРАНЯН

СИМВОЛИКА ЗЕРНЫШКА В КОНТЕКСТЕ СООТНОШЕНИЙ МЕЖДУ МИТРОЙ, ХРИСТОМ И МГЕРОМ МЛАДШИМ

Резюме

В статье рассмотрением соотношений Митра – Христос – Мгер Младший делается попытка интерпретации символического смысла зернышка. Рассматривается параллель зерно – бык – Персефона – Кора с целью раскрытия связи между ними. С применением сравнительно-исторического, мифокритического и семиотического методов и посредством этимологического анализа решаются задачи, направленные на интерпретацию и обоснование замеченных связей между религиозно-обрядовой системой митраизма, символическими реалиями обряда инициации и соотношениями митраизм – христианство. В эпизоде тавроболии, совершаемой Митрой, страдания быка рассматриваются параллельно страданиям Христа и «страданиям» зернышка на пути превращения в хлеб – начиная с расщепления зернышка до печки хлеба – испытания огнем. Рассматриваются также две ступени инициации митраизма – Ворон и Скрытый-Женщина-Дева, сказание о Митре и образ пса, который всегда присутствует в изображениях обряда тавроболии на римских барельефах и фресках. В результате интерпретации образа пса предлагается версия, которая направлена на интерпретацию эпизода с аралезами в легенде о Ара Прекрасном. На основе попытки

этимологического анализа корней слов «зерно» и «бык» предлагаются заслуживающие внимания рассуждения, которые могут пролить свет на древнейшие соответствия между Митрой, Христом и Мгером Младшим. Образ Мгера Млашего представляется в контексте отцовского и божественного порядка, закона жертвоприношения, бесплодия и мечты об укрупнении зернышка. Актуальность исследования основана на предоставляемой возможности понимания и решения национальных онтологических проблем.

Ключевые слова: *Митра, митраизм, Христос, Мгер Младший, зернышко, бык, Персефона, Кора, жертвоприношение, плодородие, пещера*

■ LILIT SEYRANYAN

THE SYMBOLISM OF THE SEED IN THE CONTEXT OF THE CORRESPONDENCES BETWEEN MITRA, CHRIST AND MHER THE YOUNGER

Summary

In the article, by considering the Mitra – Christ – Mher the Younger ratios, an attempt is made to interpret the symbolic meaning of the seed. The grain – bull – Persephone – Cora parallel is considered in order to reveal the connection between them. With the use of comparative-historical, mythocritical and semiotic methods and through etymological analysis, the tasks aimed at interpreting and substantiating the observed connections between the religious-ritual system of Mithraism, the symbolic realities of the initiation rite and the Mithraism – christianity relations are solved. In the episode of the tawroboly performed by Mitra, the sufferings of the bull are considered in parallel with the sufferings of Christ and the "suffering" of the grain on the path of transformation into bread – starting from the splitting of the grain to the oven of bread – the trials by fire. Two stages of the initiation of Mithraism are also considered – The Raven and the Hidden One-The Virgin Woman, the legend of Mitre and the image of the dog, which is always present in the images of the Tavrobolia rite on Roman bas-reliefs

and frescoes. As a result of the interpretation of the image of the dog, a version is proposed that aims to interpret the episode with the arales in the legend of the Ara the Beautiful. Based on an attempt of etymological analysis of the roots of the words "grain" and "bull", noteworthy arguments are proposed that can shed light on the oldest correspondences between Mitra, Christ and Mher the Younger. The image of Mher the Younger is presented in the context of the paternal and divine order, the law of sacrifice, infertility and the dream of grain enlargement. The relevance of the study is based on the possibility of understanding and solving national ontological problems.

Key words: *Mitra, mithraism, Christ, Mher the Younger, grain, bull, Persephone, Cora, sacrifice, fertility, cave*

- **Լիլիթ Բորիսի Սեյրանյան** – Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության և գրաքննադատության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունների առանցքում հայ նորագույն գրականության պատմության և տեսության, Սփյուռքի գրականության խնդիրներն են, արդի գրականագիտական ուղղությունները, մշակութաբանական հարցերը: Գիտական մամուլում հրապարակել է չորս տասնյակից ավելի հոդվածներ, հրատարակել «Հայեցումներ բառերից անդին» գիտական ուսումնասիրությունների ժողովածուն («Արմավ», 2021): 2012-ին արժանացել է ՃՀՀԱՀ «Համալսարանի ոսկեգոծ» մեդալի, 2018-ին՝ ՀՀ սփյուռքի նախարարության շնորհակալագրի:

Лилит Борисовна Сейранян – Кандидат филологических наук, доцент. Ведущий научный сотрудник Отдела новейшей армянской литературы Института литературы имени М.

Абеяна НАН РА, доцент Кафедры истории новейшей армянской литературы и литературной критики Факультета армянской филологии ЕГУ. В центре научных интересов – проблемы истории и теории новейшей армянской литературы, литературы армянской диаспоры, современные литературоведческие направления, культурологические вопросы. Опубликовала в научной прессе более четырех десятков статей, издала сборник научных исследований под названием «Созерцания за пределами слов» («Армав», 2021).

В 2012 году удостоилась «Позолоченной университетской медали» НУАСА, в 2018 году – благодарственной грамоты Министерства Диаспоры РА.

Lilit B. Seyranyan – PhD in Philology, associate Professor. Leading researcher at Department of Modern Armenian Literature of the Institute of Literature after M. Abegyan at NAS RA, Associate Professor at the Chair of History and Literary Criticism of Modern Armenian Literature at the Faculty of Armenian Philology at YSU. Research interests focus on the problems of history and theory of modern Armenian literature, literature of the Armenian Diaspora, modern literary trends, cultural issues. She has published more than four dozen articles in the scientific press, published a collection of scientific research entitled "Contemplations beyond words" ("Armav", 2021).

In 2012 she was awarded the "Gilded University Medal" of NUACA, in 2018 – a certificate of appreciation from the Ministry of Diaspora of the Republic of Armenia.

nazeliseyranyan@yahoo.com